ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23.11.2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով թիվ ԵԴ/4396/02/23 քաղաքացիական գործի նյութերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության կողմից 03.02.2023 թվականին հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից վերջինիս և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության միջև 19.08.2020 թվականին կնքված թիվ 02/10 ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-2-20 ծածկագրով պայմանագրի 16.01.2023 թվականի միակողմանի լուծումը և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

«Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 06.02.2023 թվականին Դատարան է ներկայացրել ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու մասին միջնորդություն՝ խնդրելով պատասխանող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը փոխարինել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերությամբ:

Դատարանի (դատավոր՝ Մ. Տաշչյան) կողմից 07.02.2023 թվականին կայացվել են որոշումներ հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին, իսկ 14.02.2023 թվականի որոշմամբ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 21.03.2023 թվականը:

Դատարանի (դատավոր՝ Մ. Տաշչյան) 27.02.2023 թվականի որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը փոխարինվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերությամբ:

Դատարանի (դատավոր՝ Մ. Տաշչյան) 21.03.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 21.03.2023թ. թիվ ԵԴ/4396/02/23 վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության, այն հիմնավորմամբ, որ *«Դատարանը 27.02.2023 թվականի ոչ*

պատշաճ պատասխանողին փոխարինելու մասին Հայցվորի միջնորդությունը բավարարելու և Պատասխանողից ապացույց պահանջելու մասին որոշումներն ուղարկել է Պատասխանողին Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր հասցեով, որոնք ստացվել են վերջինիս կողմից 20.03.2023 թվականին միայն, այսինքն, դատական ակտի հրապարակման օրվանից մեկ օր առաջ:

Բացի այդ, Պատասխանողը 07.03.2023 թվականի դիմումով բարձրաձայնել է ներկայացվող ապացույցներն ի կատարումն Դատարանի 07.02.2023 թվականի հայցադիմումը վարույթ ընդունելու և 14.02.2023 թվականի եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին որոշումների ներկայացված /այդ որոշումները կայացնելու պահի դրությամբ գործով պատասխանող է հանդես եկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը/ և հայցադիմումի օրինակը ստացած չլինելու մասին, և գործում առկա չէ հայցադիմումը Պատասխանողին տրամադրելու վերաբերյալ ապացույց: Ինչ վերաբերում է «nemo.zadayan@mail.ru» էլեկտրոնային հասցեից 16.03.2023 թվականին հայցադիմումի օրինակն էլեկտրոնային եղանակով «anpp@anpp.am» էլեկտրոնային հասցեին ուղարկված լինելու վերաբերյալ ապացույցին, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այն վերաբերելի չի կարող համարվել Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականության կատարմանն առնվազն այն պատճառով, որ «nemo.zadayan@mail.ru» էլեկտրոնային հասցեն չի հանդիսանում Դատարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն և չի կարող հաստատել Դատարանի կողմից որևէ դատավարական գործողության կատարման փաստը, այն էլ սույն գործով հայցադիմումը Դատարանի կողմից Պատասխանողին ուղարկված լինելու փաստը: Ավելին, գործում առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նշված դատավարական գործողության վերաբերյալ ապացույցը, այն է՝ ծանուցագիրը ստանալու մասին էլեկտրոնային հավաստումը: Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ գործում առկա չեն Դատարանի 27.02.2023 թվականի ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու մասին Հայցվորի միջնորդությունը բավարարելու և Պատասխանողից ապացույց պահանջելու մասին որոշումները Պատասխանողի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելու փաստը հաստատող պատշաճ ապացույցներ: Ինչ վերաբերում է գործում առկա՝ «m.tashchyan@court.am», «anpp@anpp.am», «ապացույց 1 հայցվորին.pdf, եզրափակիչ հայցվորին 1.pdf, ոչ պատշաճը հայցվորին.pdf» և այլ գրվածքներ պարունակող փաստաթղթին (գ.թ. 72), ապա դրանում առկա գրառումները բավարար չեն հաստատված համարելու այն փաստը, որ Դատարանի կողմից որևէ որոշում ուղարկվել է Պատասխանողին և ստացվել վերջինիս կողմից: Այսինքն՝ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր և հատուկ նորմերով սահմանված ընթացակարգով Պատասխանողի ծանուցումը չի իրականացվել և վերջինս զրկված է եղել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանի կողմից ուղարկված վերը նշված որոշումները Պատասխանողը կապի ծառայությունից ստացել է միայն 20.03.2023թ., իսկ 21.03.2023թ. Դատարանը հրապարակել է սույն գործով կայացված վճիռը: (...) Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ խախտվել է Պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով

երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Վերը շարադրված պատճառաբանությունների հիման վրա Վերաքննիչ դատարանը բողոքի սույն հիմքը հիմնավոր է համարում և դիտում բավարար՝ վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:»

2023 թվականի նոյեմբերի 15-ին թիվ ԵԴ/4396/02/23 քաղաքացիական գործը ստացվել է բեկանումից հետո և նույն օրը մակագրվել է Դատարանի դատավոր Լ. Սաղոյանին:

Գործը նախագահող դատավորին է հանձնվել 2023 թվականի նոյեմբերի 20-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանվելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացվելու դեպքում գործն ուղարկվում է համապատասխան դատարան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, ինչպես նաև վերադաս դատարանից գործն ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որն ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Նախնական դատական նիստը պետք է հրավիրվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երեսնօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է **գրավոր ընթացակարգով,** բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, ըստ որի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով նախատեսված գնումների հետ կապված վեճերը քննվում և դրանց վերաբերյալ վճիռներն ու որոշումները կայացվում են գրավոր ընթացակարգով, ինչպես նաև հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության

վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալը, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգով Պատասխանողի ծանուցումը իրականացնելու և վերջինս կողմից քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորություն վերապահելու անհրաժեշտությունը՝ Դատարանը գտնում է, որ սույն վեճի քննությունը պետք է իրականացնել գրավոր ընթացակարգով՝ սահմանելով, որ **պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները և հայցադիմումի պատասխանը պատասխանողի կողմից կարող են ներկայացվել Դատարանի՝ գործը վարույթ ընդունելու մասին սույն <u>որոշումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում</u>**:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխի կանոններով, 27-րդ, 199-200-րդ և 360-362-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ ԵԴ/4396/02/23 քաղաքացիական գործն ընդունել վարույթ և գործով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2024 թվականին հունվարի 08-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:
2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Դատարանի (դատավոր՝ Մ. Տաշչյան)՝ 27.02.2023թ. ապացույց պահանջելու մասին որոշմամբ սահմանված ապացույցները, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը կարող է ներկայացվել <u>դատարան սույն գործը վարույթ ընդունելու մասին սույն որոշումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում</u>:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ**